սումնարանի վերաբերութեամբ՝ Վարդանեանցի սրտին այն միայն և եթէ անփարատելի ցաւ եղաւ, որ դեռ ևս նոյն դպրոցի բացման հրամանը՝ Վեհափառէն չստացած՝ մահը վրայ հասաւ, և յափշտակեց այնպիսի անզուգական Հոր մը — ազգային վեհ բարերարի մը պատուական և փառաւոր կեանքը, որոյ քաջալերական և օրհնաւաք կոնդակներով, հայրական ցոյցերով՝ ամեն ժամ կըմխիթարուէր և կարիանայր՝ ևս քան զևս հետևիլ և միջամուխ լինել ազգասիրական գործերու. Նա մանաւանդ և կատարելով Նորին Վեհափառութեան բարի բարի առաջարկութիւններն, որք կ՝վերաբերէին ազգային բարոյական այլ և այլ հասատատութեանց. . . . . .

ԱՐԵՒ.

Ներկայ Մեծի պահոց օրերում ժողովրդեանը Ս. Աւետարանի խրատներով և քարոզներով հոգևորապէս մխիթարելու համար նշանակուեցան Ս. Էջմիածնայ Տաճարի մէջ քարոզողներ — ։ կիւրակէի երեկոյեան Գեր. Սերովբէ Եպիսկոպոս Արարատեանց, ։։ կիւրակէի՝ Գեր. Մեսրովբ Եպիսկոպոս Սմբատեանց, ։։։ կիւրակէի՝ Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց, ։։։։ կիւրակէի՝ Գեր. Երեմիա Եպիսկոպոս Գալըստեան, ։։։։։ կիւրակէի՝ Բարեշն. Կիւրեղ Վարդապետ Սրապեան և ։։։։։։ կիւրակէի՝ բարեշն. Սարգիս Վարդապետ Տ. Գասպարեան.

Բաց այսմանէ բարեշն. Կիւրեղ Վարդապետն ամենայն շաբաթ երեկոյեան քարոզումէ և Սամաղար գիւղի եկեղեցում. իսկ բարեշն. Սահակ Վարդապետ Բաղդասարեանց Մեծի պահոց ամենայն կիւրակէ առաւօտեան պիտի քարոզէ Վաղարշապատայ Եկեղեցում մինչև Ս. Յարութեան օրը.

«Աղբիւր» ամսագրի մէջ տպուած հայ լրագրների, շաբաթաթերթերի և ամսաթերթերի յայտարարութեանց շարքում տպուած էր և Ս. Էջմիածնում հրատարակուող «Արարատ» ամսագրի յայտարարութիւնը, որի մէջ սպրդած էր մի սխալ և որը հարկ ենք համարում ուղղել, այն է՝ տարեկան բաժանորդագինը փոխանակ ։։։։ (4) բուբլու՝ նշանակուած է ։։։։ (3) բուբլի.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

ՍՆՅԼ-ՔԷՐ ՖՈՐԶՆ. Վերջին ժամանակներս Ամերիկայում գտնուեցաւ արուեստական անձրև բերելու եղանակը. Դա այսպէս է լինում.— առ-